



ԳԱՆՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ ԴՈՒՍԵՆ ԲԱՐՄԵՆԻԱՆԻ ԴԻՕՇԵՍԵ ՄԵՆ ԿԱՆԱԴԱ

ԿԱՆՏԵՂ

ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒԻՍԱԲՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ, 2 Փետրուար 2020

148

DIMANCHE, 2 Février 2020



Գ. Կիրակի զկնի Ծննդեան
3^{ème} Dimanche après Noël

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Աստուածաշունչի Ընթերցումներ

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՄՈԹԷՈՍԻ
ԳՐՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ 2-ԲԴ ՆԱՄԱԿԷՆ (2.15-26)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ (6.15-21)

Les lectures de la Bible d'aujourd'hui

2 TIMOTHÉE 2.15-26

JEAN 6.15-21

Պատարագիչ եւ քարոզիչ՝
ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔՀՆՅ. ՍԱՐԳՍԸՆԵԱՆ
Հոգեւոր Հովիւ

Célébrant:

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Prêtre Paroissial

Առաւօտեան Ժամերգութիւն - Ժամը 9:30-ին

Office Matines à 9h30

Ս. Պատարագ Ժամը - 10:30-ին

La Sainte Messe à 10h30

Հոգեհանգիստ Ժամը - 12:30-ին

Requiem à 12h30

DIACRES – ACOLYTES

Chef de chœur: M. Sarkis Barsemian

Organiste: Mme Houry Bedrossian

ԿԻՐԱԿՆՆՈՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՏԻՍՈՒԹՆՈՒՆ ԳՐՈՒԱԾ 2-ԴՆ ԱՄՍԱԿԷՆ (2:15-26)

15Ձանամ դուն քեզ գնահատելի ցոյց տայ Աստուծոյ առջեւ, ըլլալով այնպիսի գործաւոր մը՝ որ պիտի չամչնայ, շիտակ բացատրելով ճշմարտութեան խօսքը: 16Բայց հեռու կեցիր սրբապիղծ ունայնաբանութիւններէն, քանի որ անոնք անելի պիտի յառաջդիմեն ամբարշտութեան մէջ, 17եւ անոնց խօսքը պիտի ճարակէ քաղցկեղի պէս: Ասոնցմէ են Յիմենոս եւ Փիղետոս, 18որոնք վրիպած են ճշմարտութենէն՝ ըսելով թէ մեռելներուն յարութիւնը արդէն եղած է, եւ կը կործանեն ոմանց հաւատքը: 19Սակայն Աստուծոյ հիմը ամուր կը կենայ եւ ունի սա՛ կնիքը. «Տէրը կը ճանչնայ անոնք որ իրն են», նաեւ. «Ո՛վ որ կ'արտասանէ Քրիստոսի անունը՝ թող հեռանայ անիրաւութենէ»:
20Մեծ տան մը մէջ կան ո՛չ միայն ոսկիէ ու արծաթէ անօթներ, այլ նաեւ փայտէ եւ հողէ անօթներ: Ոմանք պատիւի համար են, ու ոմանք՝ անպատուութեան համար: 21Ուստի եթէ մեկը մաքրէ ինքզինք ասոնցմէ, պիտի ըլլայ պատիւի անօթ մը՝ սրբացած եւ պիտանի իր Տէրոջ, պատրաստուած ամէն բարի գործի համար: 22Փախի՛ր նաեւ երիտասարդական ցանկութիւններէն, ու հետամո՛ւտ եղիր արդարութեան, հաւատքի, սիրոյ, խաղաղութեան, անոնց հետ՝ որ կը կանչեն Տէրոջ անունը մաքուր սիրտով: 23Բայց հրաժարէ՛ յիմար եւ անիմաստ վեճերէն, գիտնալով որ կռիւներ կը ծնին անոնցմէ: 24Տէրոջ ծառան պէտք չէ կռուի, հապա՛ ըլլայ հեգահամբոյր բոլորին հանդէպ, սորվեցնելու ընդունակ, անոխակալ, 25ընդդիմացողները հեզութեամբ կրթող, որ թերեւս Աստուած ապաշխարութիւն տայ անոնց՝ ճշմարտութիւնը գիտնալու համար, 26ու սթափին Չարախօսին թակարդէն, որմէ բռնուած են՝ անոր կամքին ծառայելու:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՑՈՎՉԱՆՆԷՄԻ (6.15-21)

15Ուրեմն Յիսուս, գիտնալով թէ պիտի գան յափշտակելու զինք՝ որպէսզի թագաւոր ընեն զինք, դարձեալ լեռը գնաց՝ առանձին:
16Երբ իրիկուն եղաւ՝ իր աշակերտները իջան ծովեզերքը, 17ու նաւ մտնելով կ'երթային ծովուն միւս կողմը՝ Կափառնայում: Արդէն մթնցած էր, բայց դեռ Յիսուս եկած չէր իրենց: 18Ծովն ալ այլեկո՛ծ էր՝ սաստիկ փչող հովէն: 19Երբ թի վարելով քսանհինգ կամ երեսուն սասարեզի չափ գացին՝ տեսան Յիսուսը, որ կը մօտենար նաւուն՝ ծովուն վրայ քայլելով, ու վախցան: 20Բայց ինք ըսաւ անոնց. «Ե՛ս եմ, մի՛ վախնաք»: 21Ուստի ուզեցին ընդունիլ զինք նաւուն մէջ. եւ նաւը իսկոյն հասաւ այն երկիրը՝ ուր կ'երթային:

2 Timothée 2.15-26

15 Etudie-toi de te rendre approuvé à Dieu, ouvrier sans reproche, enseignant purement la parole de la vérité. 16 Mais réprime les disputes vaines et profanes, car elles passeront plus avant dans l'impiété; 17 Et leur parole rongera comme une gangrène, et entre ceux-là sont Hyménée et Philète; 18 Qui se sont écartés de la vérité, en disant que la résurrection est déjà arrivée, et qui renversent la foi de quelques-uns. 19 Toutefois le fondement de Dieu demeure ferme, ayant ce sceau : le Seigneur connaît eux qui sont siens; et, quiconque invoque le nom de Christ, qu'il se retire de l'iniquité.

20 Or dans une grande maison il n'y a pas seulement des vaisseaux d'or et d'argent, mais il y en a aussi de bois et de terre : les uns à honneur, et les autres à déshonneur. 21 Si quelqu'un donc se purifie de ces choses, il sera un vaisseau sanctifié à honneur, et utile au Seigneur, et préparé à toute bonne œuvre. 22 Fuis aussi les désirs de la jeunesse, et recherche la justice, la foi, la charité, et la paix avec ceux qui invoquent d'un cœur pur le Seigneur. 23 Et rejette les questions folles, et qui sont sans instruction, sachant qu'elles ne font que produire des querelles. 24 Or il ne faut pas que le serviteur du Seigneur soit querelleur, mais doux envers tout le monde, propre à enseigner, supportant patiemment les mauvais. 25 Enseignant avec douceur ceux qui ont un sentiment contraire, [afin d'essayer] si quelque jour Dieu leur donnera la repentance pour reconnaître la vérité; 26 Et afin qu'ils se réveillent [pour sortir] des pièges du Démon, par lequel ils ont été pris pour faire sa volonté.

Jean 6.15-21

15 Mais Jésus ayant connu qu'ils devaient venir l'enlever afin de le faire Roi, e retira encore tout seul en la montagne. 16 Et quand le soir fut venu, ses Disciples descendirent à la mer. 17 Et étant montés dans la nacelle, ils passaient au delà de la mer vers Capernaüm, et il était déjà nuit, que Jésus n'était pas encore venu à eux. 18 Et la mer s'éleva par un grand vent qui soufflait. 19 Mais après qu'ils eurent ramé environ vingt-cinq ou trente stades, ils virent Jésus marchant sur la mer, et s'approchant de la nacelle; et ils eurent peur. 20 Mais il leur dit : c'est moi, ne craignez point. 21 Ils le reçurent donc avec plaisir dans la nacelle, et aussitôt la nacelle prit terre [au lieu] où ils allaient.



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ

Սիրելի՛ բարեպաշտ եղբայրներ եւ քոյրեր, Աւետարանական այն տողերը, որ հնչեցին այսօր Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներու խորաններէն, Յիսուս Զրիստոսի խորհրդաւոր, խորիմաստ, եւ շատերուն համար անըմբռնելի խօսքն է, որ այսօր միասին պիտի փորձենք հասկնալ՝ հիմնուելով այս խօսքերուն նախորդող իրադարձութիւններու քննութեան և եկեղեցւոյ սուրբ հայրերու փորձառութեան և մեկնութիւններուն վրայ:

Այսպիսով, եթէ նայինք Յովհաննէս Աւետարանի 6-րդ գլխուն սկիզբը, ապա կը տեսնենք, որ իրադարձութիւնները կը ծաւալէին Գալիլիոյ լճափին, ուր մեծ բազմութիւն հաւաքուած էր Յիսուսին շուրջ ոչ միայն Վարդապետին ուսուցումը կը լսէր, այլեւ ականատես կ'ըլլար բազմաթիւ հրաշքներու: Ծիշո՞ր այն ժամանակ, որ Յիսուս բազմաթիւ հիւանդներ բժշկելէ բացի, Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հինգ հացն ու երկու ձուկը եւ կերակրած էր հինգ հազար հոգին: Անկէ ետք, առանձին անցած էր լիճին միւս կողմը, մարդիկ սկսած էին փնտռել Չինք եւ ահա, թէ ինչ պատասխաններ էր անոնց Զրիստոս. «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ՝ Ձեզի, դուք զիս կը փնտռէք ոչ թէ անոր համար, որ նշաններ տեսաք, այլ որովհետեւ կերաք այդ հացէն եւ կշտացաք: Գացէք աշխատեցէք ոչ թէ կորստեան ենթակայ կերակուրին համար, այլ այն կերակուրին, որ կը մնայ յաւիտենական կեանքի համար, եւ որ մարդու Որդին կու տայ ձեզի» (Ղուկ. 6:26, 27): Այնուհետեւ մի քանի անգամ եւս կը շեշտէ այդ խօսքը՝ ըսելով. «Ես եմ կեանքի հացը... ով ուտէ այս հացէն, յաւիտեան կ'ապրի... ով հաւատայ Որդիին, յաւիտենական կեանք կ'ունենայ» (Յովհ. 6:35, 40-41, 48, 51, 54, 58):

Ոչ միայն այս դրուագը, այլեւ Զրիստոսի երկրային ամբողջ կեանքը բացայայտեց մարդկային ցեղի ցաւալի քարսրտութիւնն ու անհաւատութիւնը, երբ մարդիկ ունէին գիտելիքներ, ականատես կ'ըլլային բազմաթիւ հրաշքներու, սակայն չէին կամենար ազատուիլ

իրենց հոգիին կարծրացած վիճակէն եւ յամառօրէն կը հակա-
ռակէին ակնյայտին: Տաւօք այս ոչ միայն Զրիստոսի ժամանակակից-
ներուն կը վերաբերի, այլեւ այժմեան աշխարհի եւ նաեւ քրիստոնէայ
աշխարհի մարդոց: Նայինք մենք մեզի եւ մեր շուրջը, սիրելիներ:

Որքան շատ են մարդիկ, որոնք կը կրեն «քրիստոնէայ» անունը,
նոյնիսկ եկեղեցի կը յաճախեն, ծեսերու կը մասնակցին, գիտեն
կարգեր ու շարականներ, կ'ըսեն, որ կը հաւատան... Կան նաեւ
այնպիսիներ, որ կ'ըսեն. «Եկեղեցի երթալու պէտք չունիմ, ես իմ
սիրտիս մէջ կը հաւատամ իմ Աստուծոյս եւ այդ բաւարար է»: Իսկ
ի՞նչ կ'ըսէ Յակոբոս Տեառնեղբայրը այս մասին, կը յիշէ՞ք:
«Եղբայրներ իմ, ի՞նչ է օգուտը, եթէ մէկը ըսէ, թէ հաւատք ունի,
սակայն հաւատքը արտայայտող գործեր չունենայ: Միթէ հաւատքը
անոր կը կարողանա՞յ փրկել: ... Դուն կը հաւատաս, որ Աստուած մէկ
է. լաւ կ'ընես: Դեւերն ալ կը հաւատան եւ կը դողան: Ո՛վ փուչ մարդ,
կ'ո՛ւզես գիտնալ. հաւատքը անօգուտ է առանց գործերու: ... Ինչպէս
որ մեռած է մարմինը առանց հոգիի, այնպէս ալ մեռած է հաւատքը
առանց գործերու» (Յակ. 2:14, 19-20, 26): Իսկ ի՞նչ անիրաժէշտ է
գործելու համար, սիրելի՛ հաւատացեալներ: Նպատակ, ձգտում, ուժ,
կարողութիւն... Բոլոր քրիստոնէաներու կեանքի նպատակը մէկ է՝
Զրիստոս, ձգտումը՝ Աստուծոյ Արքայութիւն: Իսկ ուժն ու
կարողութիւնը ուրկէ՞ ստանանք, ի՞նչ կը կարծէք: Մեր ֆիզիքական
մարմինները սնուցանողը, ուժ եւ զօրութիւն հաղորդողը նիւթական
հացն է՝ սնունդը: Որակեալ բաւարար սնունդը ուժ կու տայ մարդուն,
կ'ապահովէ մարմինին գործունէութիւնը: Անոր բացակայութիւնը կը
հիւժէ մարդը, կը զրկէ կենսական ուժերէն եւ ի վերջոյ մահուան կը
տանի: Իսկ հիմա, եթէ կ'ընդունինք, որ երկու մարմին ունինք՝
ֆիզիքական մարմինը եւ հոգին, եւ առաւել էւս ընդունինք, որ հոգին
շատ անելի կարելոր է, քանի որ յաւիտենական կեանք ունի, ի
տարբերութիւն ժամանակաւոր ֆիզիքականի, ապա ուղղակի
անտրամաբանական է, որ կը դողանք մեր ժամանակաւոր մար-
միններուն վրայ, կը սնուցանենք, կը խնամենք, կը փայփայենք
զանոնք՝ յագուրդ տալով անոնց հաճոյքներուն, եւ կ'անտեսենք յա-
ւիտենական հոգին: Սարսափելի է նոյնիսկ պատկերացնել այն խեղճ
հոգիներու հիւժուածութեան աստիճանը, որոնք անտեսուած եւ մոռ-
ացութեան մատնուած են իրենց խնամակալներու կողմէն: Բայց
դառնանք մեր սեփական հոգիներուն եւ տեսնենք, թէ ինչպէս պէտք
է սնուցանել եւ հոգ տանիլ անոնց: Անոր համար հեռու երթալ պէտք
չէ, սիրելիներ, քանի որ Տէրը ըսաւ. «Ես եմ կեանքի հացը: Ով ուտ
այս հացէն, յաւիտեան կ'ապրի»: Ուրեմն հոգին սնուցանող, կեանք
պարգեւող փրկչական այդ ուժը Զրիստոսի մէջ է եւ հաւատք պէտք
է այդ ընդունելու համար: Եւ մենք՝ քրիստոնէաներս գիտենք, որ այս
միայն փոխաբերական իմաստ չի կրեր, այլ կենդանի իրականութիւն
է, որ կ'ամփոփուի Սրբութեան Սրբոցի՝ փրկչական Մարմնի եւ
Արեան մէջ, որուն ամէն Կիրակի Սուրբ Պատարագի ժամանակ
իւրաքանչիւր հաւատացեալ հնարաւորութիւն ունի հաղորդակցուե-

լու: Այս կը վկայէ Տիրոջ այն խօսքը, թէ. «Այն հացը, որ ես կու տամ, իմ մարմինս է, ես կու տամ, որպէսզի աշխարհը կեանք ունենայ»: «Ճշմարիտ, ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ չուտէք մարդու Որդիին մարմինը եւ չըմպէք անոր արիւնը, ձեր մէջ կեանք չէր ունենար» (Յովհ. 6:52, 54):

Այո՛, սիրելիներ, ամանց Աստուծոյ անգին զոհագործութեան, մարդկութիւնը յաւերժ մահուան դատապարտուած կը մնար: Տիրոջ խաչեալ մարմինը եւ հեղուած սուրբ արիւնը մեր կեանքերու փրկագինը եւ յաւիտենութիւնը ժառանգելու անհաւատչեան եղան: Եւ այս զոհագործութեան հաղորդուիլն է, որ Աստուծոյ ներկայութիւնը կը հաստատէ մեր հոգիներուն մէջ: Ահա, այս յստակ գիտակցութեամբ, հաստատուն հաւատքով եւ մեծագոյն երկիւղածութեամբ է, որ պիտի մօտենանք Սուրբ Հաղորդութեան: Այս պատճառով է, որ Պօղոս Առաքեալը (Ա Կորնթ. 11:29) եւ Եկեղեցւոյ սուրբ հայրերը կը զգուշացնեն Սուրբ Հաղորդութեան անարժան եւ անպատրաստ կերպով մօտենալ:

Ուրեմն, այս սքանչելի յուսապարգեւ տողերով ալ կ'աւարտեմ խօսքս, սիրելի՛ հաւատացեալներ, յուսալով որ, այսուհետեւ ւաւելի մեծ պատասխանատուութեամբ եւ երկիւղով կը մօտենաք Աստուծոյ շնորհած Կենարար Հացին, որ ինքնակամ Ինքզինք մեզի նուիրեց, որպէսզի Քրիստոսին մեր մէջ կրելով՝ յաւիտենական կեանքի ժառանգորդները դառնանք: Թող Տիրոջ սրբասուրբ Մարմինն ու Արիւնը մաքրեն մեզ մեր մեղաւոր պիտերէն, սնուցանեն ու զօրացնեն մեր հիւժած հոգիները, ուժ հաղորդեն մեր խաչը անտրտունջ կրելու եւ դէպի փրկութիւն տանող փշոտ ճամբուն վրայ անսասան մտալու համար:

Թող Աստուծոյ սերը, շնորհն ու խաղաղութիւնը ձեզի հետ ըլլան: Ամէն:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ քահանայ Մարգարտան
Հոգեւոր հովիւ

Résumé du Sermon

Le miracle de la multiplication des pains (Évangile St Jean :6) explique la nourriture spirituelle proposée par Jésus.

Le seigneur désire emmener les hommes à dépasser leur demande bien matérielle en disant: <<Celui qui me mangera vivra par moi>> et c'est la compréhension de l'Eucharistie.

Sans nourriture, nous avons faim et nous nous sentons épuisées et si nous omettons de communier notre vie spirituelle s'en ressent et nous nous sentons faibles.

L'Amé qui se nourrit de l'Eucharistie se remplit de la puissance de Christ.

Enfin la participation à la Messe dominicale, pas simplement pour se satisfaire d'y avoir assisté, doit être le moyen pour concevoir que nous partageons la Grace de Dieu donnée par l'Église.

En Foi et en Prière
Père David Margaryan
Prêtre paroissial



ԿԱՐԵԻՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտե՞իք թե՛.-

- **Ի՞նչ յաճախականութեամբ պէտք է հաղորդուիլ այսօր :**

Այժմեան իրականութիւնը եւ ծիսական կեանքը կը տարբերի անցեալէն, քանզի մեր մօտ սովորաբար Ս. Պատարագ կը մատուցուի Կիրակի, սօնական եւ մասնաւոր օրերուն, ինչպէս նաեւ այս ամ այն սուրբի սօնին, որ կը հանդիպի շաբթօւայ ընթացքին: Հետեւաբար, թէ քանի՛ անգամ կարելի է տարուան մէջ Ս. Հաղորդութիւն ստանալ հարցը կախուած է ոչ նիայն Ս. Պատարագներու մատուցումէն, այլ նաեւ մեր ներքին հոգեւոր պատրաստութենէն: Անշուշտ, կատարեալ եւ իտիական կ'ըլլար հաղորդուիլ իւրաքանչիւր Պատարագի ժամանակ, բայց գործնական հոգեւոր կեանքը այլ բան ցոյց կու տայ: Մենք զանազան պատճառներով միշտ չէ, որ պատրաստ ենք Ս. Հաղորդութեան մօտենալու: Բացի այդ, մեզմէ իւրաքանչիւրը ունի իր հոգեւոր ուրոյն աշխարհը, որ կը տարբերի միւսներէն: Եթէ տուեալ մարդը ինքզինք պատրաստ կը զգայ եւ ցանկութիւն ունի հաղորդուելու ամէն Կիրակի, ապա անկասկած կրնայ մօտենալ Ս. Հաղորդութեան: Մէկ այլ ծայրայեղութիւն է, երբ մենք կը հաղորդուիք տօնէ տօն կամ առիթէ առիթ: Ս. Հաղորդութեան իւրաքանչիւր ճաշակումէ յետոյ, մարդ պէտք է պատրաստուի յաջորդին, այսինքն՝ քրիստոնեային կեանքը պէտք է ըլլայ Տիրոջ Մարմինն ու Արիւնը ճաշակելու յանսպազ պատրաստութեան յարատեւ ընթացք մը:

- **Այդ պարագային ինչո՞ւ հոգեւորականները յաճախ կը նշեն, որ տարուայ ընթացքին պէտք է հաղորդուիլ հինգ տաղաւար տօներուն:**

Եկեղեցականները կը հաղորդեն, որ քրիստոնեան տարուայ ընթացքին պարտադիր Ս. Հաղորդութիւն ստանայ գոնէ հինգ տաղաւար տօներուն՝ **Ս. Օննդեան, Ս. Յարութեան (Ջատիկին), Պայծառակերպութեան (Վարդավառին), Ս. Աստուածածնի Վերափոխման (Խաղողօրհներբին) եւ Խաչվերագին:** Սա այն նուագագոյնն է, որ կը պահանջուի իւրաքանչիւր քրիստոնեայէ: Բայց պէտք չէ բուարարուիլ այսքանով: Ինչպէս մեր մարմինին ֆիզիզական գոյութեան համար նիւթական հաց կ'ուտենք մեր քաղցը մեղմելու համար, այնպէս ալ հոգեւոր հացի՝ Ս. Հաղորդութեան, կարիքն ունինք՝ մեր հոգեւոր քաղցն ու սովը բուարարելու համար: Ուստի եզրակացութիւնը միանշանակ է՝ ցանկութեան եւ պատրաստ ըլլալու պարագային, անպայման եկեղեցի երթալ, մասնակցիլ Ս. Պատարագին եւ Ս. Հաղորդութիւն ստանալ:

Տօներ

Կիրակի, 2 Փետրուար 2020

Առաջաւորաց պահք

Այս տարի Փետրուար 6-ին կը սկսի Առաջաւորաց պահքը (այն յատուկ է միայն Հայ Առաքելական եկեղեցիին), որ կը տեւէ հինգ օր՝ այս տարի մինչեւ Փետրուար 10-ը ներառեալ:



Առաջաւորացը առաջին պահքն է, որ հաստատուած է Ս. Գրիգոր Լուս-աւորիչի կողմէ, եւ այդ պատճառով ալ կը կոչուի առաջւորաց՝ առաջին:

Ինչպէս կ'աւանդուի մեզի պատմութիւնը, Խոր Վիրապէն ելլելէն յետոյ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը՝ Տիրոջ հրաշքով դարձի եկած Տրդատ արքային, հայոց մեծամեծերուն ու ողջ ժողովուրդին, Նախքան մկրտելը՝ 65 օր շարունակ, Զրիստոսի հաւատքը կը քարոզէր եւ այդ օրերէն 5-րդ օրը պատուիրեց պահեցողութեամբ եւ ապաշխարութեամբ պատրաստուիլ Մկրտութեան:

Հին ժամանակ պահք ըսելով կը հասկնային մեր այսօրուայ ծովը, այսինքն՝ ընդհանրապէս չէին ուտեր (ջուրի սակաւ գործածութեամբ) կամ կ'ուտէին միայն սակաւ բանջարեղէն: Բայց հետագային բանջարեղէնին աւելցան բուսական ծագում ունեցող նաեւ՝ այլ կերակուրներն ու մեղրը, և եւ տարբերակին մէջ մտաւ պահքի ու ծովի միջեւ՝ ծովը դարձնելով պահքի աւելի խիստ տեսակ: Այսօր Առաջաւորաց պահքը պահելու կերպը՝ ծով, թէ սովորական պահք, կը թողուին հաւատացեալի կամքին:

Առաջաւորաց պահքը հիմնականին կը նախորդէ Ս. Սարգիսի տօնին, սակայն տօնին հետ այն որեւէ առնչութիւն չունի:

Պահք պահելէն առաջ անհրաժեշտ է երթալ եկեղեցի, մասնակցիլ երեկոյեան ժամերգութեան եւ աղօթել, որ Աստուած գորացնէ պահքը ճիշդ աննելու եւ հոգեւոր օգուտներ քաղելու համար: Պէտք է քաջ գիտնալ, որ պահքը մարմնի համար չէ, այլ՝ հոգիի մեղքէն ազատագր-ուելու:

Պահքի վերջին օրը անհրաժեշտ է երթալ եկեղեցի, մասնակցիլ երեկոյեան ժամերգութեան, իսկ յաջորդ օրը՝ Ս. Սարգիսի տօնին, մասնակցիլ Ս. Պատարագին եւ հաղորդուիլ, որուն միջոցաւ դուրս գալ նաեւ՝ պահքէն:

Իսկ ինչո՞ւ հինգ օր պահք կը պահենք:

Մեր եկեղեցւոյ Հայրերը այս մասին մի քանի բացատրութիւն կու տան.-

Ա) Ինչպէս արդէն ըսուեցաւ, սուրբ Գրիգոր Լուսաւորչի կարգադրութեամբ ողջ արքունիքը եւ Հայ ժողովուրդը ապաշխարութեան պահքի մէջ եղան 5 օր:

Բ) Զանի որ մարդը հինգ զգայարան ունի՝ տեսանելիք (աչքերը), լսելիք (ականջները), հոտոտելիք (քիթը), ճաշակելիք (բերանը) եւ 202-ափելիք (ձեռքերն ու ոտքերը), որոնց միջոցաւ կը մեղանչէ, ուստի այս պահքի հինգ օրերու ընթացքին պիտի զոյջայ ասոնցմով կատարած իր մեղքերուն համար, խոստովանի անոնք Աստուծոյ եւ ջանայ այլեւս չկատարել:

Գ) Ինչպէս յայտնի է, Աստուած աշխարհը եւ անոր մէջ եղած ամէն ինչ ստեղծեց 6 օրերու ընթացքին: Վեցերորդ օրը ստեղծեց մարդը եւ, թէև միևս այդ արդէն ստեղծեր էր բոլոր տեսակի կենդանիները, տուած անոնց անելու ու բազմանալու հրաման, սակայն ուսելու հրաման դեռևս չէր տուած: Այդ հրամանը (Տե՛ս՝ Ծննդ. 1: 29-30) մարդուն ու ամբողջ կենդանական աշխարհին տուաւ միայն վեց-երորդ օրը, այսինքն՝ 5 օր յետոյ: Ուրեմն աշխարհի ստեղծման ամ-աջին 5 օրը, կարելի է ըսել, պահքի կամ ծովի օրեր էին, քանի որ ոչ մէկը բան մը չէր ուտեր:

Դ) Ըստ Եկեղեցւոյ՝ հինգօրեայ պահք սահմանած էին Նաեւ՝ Սովսեսէն առաջ եղած Նահապետները: Աւանդութիւնը կ'ըսէ, թէ դրախտէն արտաքսուելէն յետոյ Ադամը 5 օր քաղցած մնաց: Անորմէ տրովելով՝ անոր որդիներն ալ հինգօրեայ պահք կը պահէն, օրինակ, Աբելը՝ զոհ մատուցելէն առաջ, կամ Սեթը, երբ իր հայր Ադամը մեռաւ: Ենովքն ալ 5 օր պահք կը պահէր ամէն ամսամուտին, իսկ Նոյը այս պահքը պահած է տապան մտնելէն առաջ եւ այնտեղէն ելլելէն յետոյ: Աբրահամը, Յակոբը եւ Յովսէփն ալ հինգօրեայ պահք կը պահէն: Եւ ըստ մեր Եկեղեցւոյ հայրերու բացատրութեան՝ Առաջաւորաց պահքը՝ Նաեւ՝ Նահապետներէն սահմանուած ըլլալն է պատճառը, որ այս պահքի առաջին չորս օրերու ընթացքին (Երկուշաբթիէն մինչեւ Հինգշաբթի) Աստուածաշունչէն հատուածներ՝ ընթերցուածներ, չեն կարդար եկեղեցւոյ մէջ, որովհետև այս պահքը հաստատուած է այն ժամանակ, երբ դեռ չէին գրուած ոչ Հին Կտակարանի, ոչ ալ առաւել եւս Նոր Կտակարանի գիրքերը:

Առաջաւորաց պահքի Ուրբաթը Յովսէփ մարգարէի յիշատակի օրն է: Առաջաւորաց պահքի վերջին՝ Ուրբաթ օրը, Յովսէփ մարգարէի (ս. Բ. 8-րդ դար) յիշատակի օրն է, եւ եկեղեցւոյ մէջ կ'ընթերցուի անոր գիրքը, ուր Նոյնպէս կոխօտիկ պահքի ու ապաշխարութեան մասին. «Թագաւորին ու Անոր մեծամեծներուն կողմէ Նիհուլի մէջ կը յայտարարուի ու կ'ազդարարուի, թէ մարդ եւ անասուն, հօտ եւ ար-ջառ թող բան մը չուտեն, չճարակեն եւ ջուր չխմեն: Եւ մարդ ու ան-ասուն քուրճ հագան, ի սրտէ աղօթեցին Աստուծոյ, բոլորը ետ կէ-ցան իրենց չար ճամբաներէն եւ անօրէնութիւններէն, որ իրենց ձեռ-քով կը կատարուէր...» (Յովս. 3: 7-8):

Holidays

Saturday, February 1, 2020

Commemoration of St. Gregory the Theologian

St. Gregory the Theologian has left rich literary heritage, which was translated into Armenian in the 5-8th centuries AD. In all probability St. Moses of Khoronk

has made a part of translations into Armenian. St. Gregory the Theologian is one of the most prominent figures of Christianity, who by means of the struggle against Arians has kept Christianity uncorrupted and by means of his works he has greatly influenced the formulation of the Christian theologian ideology. St. Gregory the Theologian was born in 328 AD in the village Ariangue near the town Naziangue, of Cappadocia. He was the son of the Bishop Gregory. Gregory studied in Caesaria, and then in Athens. In Athens Gregory became acquainted with St. Barsegh of Ceasaria - one of the prominent figures of Christianity in the future. After leading ascetic life for a while, Gregory returned to Naziangue, where he was ordained as a priest by his father. Later he became the Bishop of Sasima. Together with St. Barsegh of Ceasaria St. Gregory the theologian struggled against the Arians. He participated in the 2nd Ecumenical Council of Constantinople. St. Gregory passed away on January 25, 389 AD.

Sunday, February 2, 2020

Eve of the Fast of Catechumens

The Fast of Catechumens is peculiar only to the Armenian Church. It begins three weeks before the Great Lent. In ancient times people could eat only bread and salt during the fast of Catechumens. On those days it was not allowed to celebrate Divine Liturgy either.

The meaning of the Fast of Catechumens is the purification of the five human senses from pagan impurity. In the ancient Church there was a custom to fast during five days before baptism. St. Gregory the Illuminator ordered King Tiridates and others to fast for five days before baptism in order to get freed of the evil. That is the reason also for fasting of Catechumens to be called "fast of salvation" from the evil.

According to the tradition, the fasting of Catechumens was initiated by St. Gregory the illuminator in memory of the above-mentioned practice. There are two explanations regarding the name of this feast.

It is called the fast of Catechumens:

1. As the precursor of the Great Lent, and
2. As the first Armenian fast.

On the fifth day of the fasting of Catechumens, on Friday, the remembrance day of the Prophet Jonah is celebrated, but it is celebrated not as the feast of Prophet Jonah, but as the memory of an example of great repentance and abstinence which Jonah urged. At times, wrongly, the fasting of Catechumens was called the fast of St. Sarkis, because the Armenian Church celebrates the feast of St. Sarkis on Saturday following the fast. In Middle Ages the Byzantine and the Georgian Churches blamed the Armenian Church for the fasting of Catechumens, relating it to St. Sarkis, to whom they ascribed sorcery. According to the testimonies of Armenian medieval writers. Greek and Latin Churches also had the fasting of Catechumens in ancient times.



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔ ԱՂՕԹՔ ՍՈՒՐԲ ՀԱՂՈՐՈՒԹԻՒՆ ԱՌՆԵԼԷՆ ԱՌԱՋ

Պահպանե իմ կեանքս, Տեր
բոլոր փորձութիւններէն, եւ ամէն անգամ
որ ինծի դեմ պատերազմողը վրաս յարձակի՝
կորաքամակ եւ ամօթահար ետ դարձուր:
Անսայթաք պահե միտքս եւ լեզուս
եւ մարմնիս ամբողջ գործունեութիւնը:
Միշտ ինծի հետ եղիր,
քու անսխալ խոստումիդ համաձայն, թէ «Ով որ
Մարմնես կ'ուտէ եւ Արիւնես կը խմէ՝ մէջս կը
բնակի, եւ ես՝ անոր մէջ»:
Դուն ինքդ ըսիր, Մարդասեր պահե
աստուածային ակրօծելի հրամանովդ
տուած խոստումդ:
Որովհետեւ ողորմած, գթած եւ մարդասեր ես
դուն, ով Աստուած, պարգեւիչը ամէն
բարիքներու:
Հօրդ եւ ամենասուրբ Հոգիիդ հետ միասին՝
քեզի կը վայելէ փառքը. Այժմ եւ միշտ եւ
յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

PRIÈRE AVANT LE RECEVOIR LA SAINTE COMMUNION

Fortifie ma vie, ô Seigneur,
contre toute tentation, et éloigne
de moi mon adversaire, car j'ai honte
et suis déconcerté chaque fois qu'il m'attaque.
Fortifie chacun des actes
de mon esprit et de ma langue
et chaque mouvement de mon corps.
Sois toujours avec moi,
selon ta fidèle promesse : « Celui qui mange ma chair
et boit mon sang demeure en moi
et je demeure en lui. »
Tu l'as dit, Dieu d'amour.
Fais respecter les mots
de tes commandements divins et irrévocables.
Car Tu es un Dieu de pitié, de compassion et d'amour
et le dispensateur de tous les bienfaits.
Tu es digne de gloire, en union avec ton Père
et le Saint Esprit, maintenant et toujours
et pour l'éternité de l'éternité. Amen.

Շաբթուայ խորհրդածութիւնը

- Երիտասարդութեան տեսանկիւնէն կեանքը՝ անվերջ ապագայ է այդ, ծերութեան տեսանկիւնէն՝ շատ կարճ անցեալ:
Արթիւր Շորենհաուեր
- Երբեք մի վիճիք յիմարի հետ՝ մարդիկ կրնան չնկատել ձեր միջեւ եղած տարբերութիւնը:
Ռեյպերնի կանոնը
- Իմ կեանքիս փորձը համոզած է ինձ, որ պակասութիւններ չունեցող մարդիկ շատ քիչ արժանիքներ ունին:
Աբրահամ Լինգոլլ, ԱՄՆ 16-րդ նախագահ
- Կեանքը՝ այնպէս է ինչպէս հեծանիւ քշելը: Որպէսզի պահես հաւասարակշռութիւնդ, պետք է անընդհատ շարժուիս:
Ալպերդ Էյնշթայն

ՏՆՕՐՀՆԷՔԻ ԱԻՎԱԴՈՅԹՆ ՈՒ ՍՈՎՈՐՈՅԹԸ

Տնօրինէք փափաքող հաւատացեալները կրնան հեռաձայնել
Տ. Դավիթ Քինյ. Սարգարեանին՝ (514) 448-2809
կամ Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066

The Tradition of Home Blessing

The home is blessed for dedication or rededication, a reminder that the home reflects the Kingdom of God. Traditional times of the year for Armenian homes to be blessed are Eastertide (the 50 days following Easter), Christmastide (until February 14, the Feast of the Presentation), and after having moved into a new home.

At a Home Blessing, every member of the family assembles with the priest to sanctify together three life-giving gifts: bread, water, and salt. It is a custom for the priest to bring with him a nushkhar as a symbol of the presence of God's blessing.

To request a Home Blessing,
please contact with
Fr. David Margaryan at (514) 448- 2809
or church office at (514) 279-3066.

ԱՌ Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՀՈԳԵՅԱՆԳԱՏԵԱՆ ՊԱՇՏՈՆԻ

Մեր սիրելի հաւատացեալներուն կը տեղեկացնենք, որ
Հոգեհանգստեան Պաշտօն ինդրելու համար Եկեղեցի
հեռաձայնել պահանջուած հոգեհանգստի թուականէն մէկ
շաբաթ առաջ

մինչեւ այդ շաբթուայ **Հինգշաբթի կ.ե. Ժամը 5-ը:**

Ե-Յասցեով (e-mail) ինդրուող հոգեհանգստեան պաշտօն կամ որեւէ այլ
ինդրանք պէտք է **հաստատուիլ եւ վերստուգուիլ** քարտուղարութեան հետ
հեռաձայնելով Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514) 279-3066 թիւին:

Շնորհակալութիւն
Եկեղեցւոյ գրասենեակ

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
ԿԻՐԱԿԻ, 2 ՓԵՏՐՈՒԱՐ 2020
REQUIEM
DIMANCHE, LE 2 FEVRIER 2020



Տիար Արթո Մանուկեանի եւ դուստրին՝ Լորիի,
Տօքթ. Արեն եւ Մատլէն Մանուկեաններու
եւ զակին՝ Ալէք-Սարոյի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն
պիտի կատարուի իրենց սիրեցեալ
զակին եւ եղբօր՝
Վաղամերիկ
ՍԱՐՕ ԱՐՄԷՆ
ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

(SARO ARMEN MANOUKIAN)

Մահուան 15-րդ տարելիցին առիթով



Պրն. Ռէյմօն Ներճիվանեանի,
Տ. եւ Տիկ. Մարկըրրիթ եւ Ալէքս Շէմիի,
Տ. եւ Տիկ. Հրաչ եւ Մալբի Ներճիվանեաններու,
Թոռներուն՝ Թանիայի, Քրիսթիանի, Արազի
եւ Լորիի եւ ընտանիքներուն,
Ծոռերուն՝ Մակիի, Տէմիի, Մեանի եւ Նարէի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
կատարուի իրենց սիրեցեալ
մօր, մեծ մօր եւ մեծ մեծ մօր՝
ՇԱՔԷ ՆԵՐՃԻՎԱՆԵԱՆԻ

(CHAKE NERDJIVANIAN)

(Ծնեալ Քարաքէզեան)

Մահուան 60-րդ տարելիցին առիթով





Պապոյեան ընտանիքի,
 Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի
 կատարուի իրենց սիրեցեալ ծնողաց՝
ՂԵՒՈՆԴ ԵՒ ԹԱԳՈՒՀԻ ՊԱՊՈՅԵԱՆՆԵՐՈՒ
(GHEVONT & TAKOUHIE BABOYAN)

Հոգիներուն ի հանգիստ
Ինչպէս նաև՝

ՊԱՊՈՅԵԱՆ ԵՒ ՄԱՀԱԿԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց
 հոգիներուն ի հանգիստ



ՀՈԳԵՅԱՆԳՍՏԵԱՆ ԱՐՈՁՔ

Քրիստոս որդի Աստուծոյ անոխակալ եւ բարեգութ,
 գթա թո արարչական սիրովդ
 ի հոգիս հանգուցեալ ծառայից թոց:
 Յիշեալ յաւուր մեծի գալստեան արքայութեան թոյ:
 Արա արժանի ողորմութեան քաւութեան
 եւ թողութեան մեղաց:
 Դասաւորեալ պայծառացո ընդ սուրբս թո
 յաջակողմեան դասուն:
 Չի դու ես Տէր եւ արարիչ ամենեցուն.
 դատաւոր կենդանեաց եւ մեռելոց:
 եւ քեզ վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ.
 Այժմ եւ միշտ եւ յաւիտեանց յաւիտենից, ամէն:



«Խնդրեցէ՛ք Աստծումէ, եւ Ան պիտի տայ ձեզի, փնտռեցէ՛ք, ըւ
 պտտի գտնէք, բախեցէ՛ք եւ պիտի բացուի ձեզի, որովհետև ո՛վ որ
 խնդրէ՛ կը ստանայ, ո՛վ որ փնտռէ՛ կը գտնէ, եւ ո՛վ որ դուռը
 բախէ՛ պիտի բացուի անոր առջեւ» (Մատթ. 7:7):

Աղօթքը երկխօսութեան ձեւ է Աստուծոյ եւ մարդու միջեւ, իսկ իրարու
 համար աղօթելը՝ միջնորդութիւն-խնդրանք՝ յանուն դիմացիին
 փրկութեան:

Մեծապէս կարեւոր է ողջերուն աղօթքը ննջեցյալներուն համար եւ առաւել
 կարեւոր՝ ողջերուն աղօթքը ողջերուն համար:

Պատարագի ժամանակ հաւատացեալները սովորութիւն ունին աղօթքի
 խնդրանքով դիմել քահանային՝ աղօթելու հիւանդի բժշկութեան կամ
 ննջեցեալ հարազատի հոգիին փրկութեան համար: Եկեղեցիներուն մէջ
 ընդունուած անանդոյթ է թերթիկներու վրայ գրել այն մարդոց անունները,
 որոնց համար կը դիմեն Աստուծոյ յատուկ խնդրանքով:

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹՅՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

TZNOUNT WATER BLESSING

GODFATHER:

Mr. Manvel Markosyan \$500.

ALTER FLOWERS

IN MEMORY OF

THE LATE ZEVRT MANOUKIAN:

Mrs. Houry Manoukian \$60.

HOKEHANKISD:

THE LATE SARKIS ARABIAN:

Mrs. Anni Arabian \$500, Nina & Asdeghik Arabian \$100,

Mr. Nareg Berberian \$50.

THE LATE DERBEKYAN FAMILY:

Dr. Vilma Derbekyan \$200, Mr. & Mrs. Roupen & Meline Arsever \$150.

THE LATE KEGHAM SUMBULIAN:

Mr. Serge Sumbulian \$100, Mr. Levon Boyadjian,

Mr. Kevork Najarian \$50.

THE LATE SETA SOUKIASSIAN:

Mrs. Anne Soukiassian \$100, Mr. Zaven Kazandjian \$75.

THE LATE DN. HAMPARTZOUM AHAZARIAN:

Mrs. Adrne Aghazarian \$50

YOUGHAKIN TZNOUNT (CHRISTMAS):

Mr. & Mrs. Manouk & Siran Jamgotchian \$150, Mrs. Nivart Misissian,

Mr. & Mrs. Garbis & Sylva Ferah \$50.





LES FÊTES RELIGIEUSES IMPORTANTES DE L'ANNÉE 2020 SELON LE CALENDRIER DE L'ÉGLISE APOSTOLIQUE ARMÉNIENNE

05/01/2020	DJRAKALOUYTS / ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍՈՒՐԲ ԵՆՆՈՒԵԱՆ Vigile de la Nativité et de la Théophanie, Veille de Noël
06/01/2020	SOURP DZNOUNT / ՍՈՒՐԲ ԵՆՈՒՆԵՆ ԵՒ ԱՍՏՈՒԿԵՅԱՑԱՆՈՒԹԻՒՆ Noël et Epiphanie
13-14/02/2020	DIARNENTARATCH / ՏԵԱՈՆԵՆԴՈՒՄԱԶ Fête de la Chandeleur, Présentation de Notre Seigneur au Temple, à 40 jours.
20/02/2020	VARTANANTS / ՎԱՐՎԱՆԱՆՑ Fête de saint Vartan et de ses 1036 compagnons d'arme
23/02/2020	POUN PAREQUENTAN / ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԿԱՆ Carnaval - Début du Carême
28/02/2020	MOUDN I VIRAB / ՍՈՒՆԻ Ի ՎԻՐԱՊ Fête de St. Grégoire l'Illuminateur, commémoration de son emprisonnement.
05/04/2020	DZAGHGAZART / ԵՄԱԿԱԶԱՐԴ Dimanche des Rameaux : entrée du Christ à Jérusalem
07/04/2020	AVEDOUM / ԱՎԵՏՈՒՄ Annonciation à la Sainte Vierge Marie
09/04/2020	AVAK HINKCHAPTI / ԱՎԱԳ ԶԻՆԳԵԱԲԹԻ Jeudi Saint. La Cène, Lavement des pieds, Service des Ténèbres
10/04/2020	AVAK OURPAT / ԱՎԱԳ ՈՒՐՔԱԹ Vendredi Saint. Commémoration de la Passion et d'Ensevelissement
11/04/2020	DJRAKALOUYTS / ՃՐԱԳԱԼՈՅՑ ՍՈՒՐԲ ԶԱՏԿԻ Samedi Saint. Vigile pascale.
12/04/2020	SOURP HAROUTYUN (ZADIG) / ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԻՒՆ (ԶԱՏԻԿ) Pâques. Résurrection de Notre Seigneur Jésus-Christ.
13/04/2020	MERELOTS / ՄԵՌԵԼՈՑ Lundi de Pâques (Requiem pour tous les défunts).
21/05/2020	HAMPARTSOUM / ԶԱՐԲԱՐՁՈՒՄ Ascension du Christ
31/05/2020	HOKEKALOUSD / ԶՈՂԵԳԱԼՈՒՄՑ Pentecôte
14/06/2020	ETCHMIADZINE / ՍՈՒՐԲ ԷՉՄԻԱԾԻՆ Fête de la Cathédrale Saint Etchmiadzine
19/07/2020	VARTAVAR / ՊԱՅԵՄՈՒՄՎԵՐՊՈՒԹԻՒՆ (ՎԱՐՎԱԿԱՆ) Transfiguration de Notre-Seigneur Jésus-Christ
16/08/2020	VERAPOKHOUM — KHAGHOGHORHNEK / ՎԵՐԱԹՈՒԽՈՒՄ Assomption de la Sainte Vierge. Bénédiction du raisin
13/09/2020	KHATCHVERATS / ԽԱՉՎԵՐԱՑ Exaltation de la Sainte Croix.
10/10/2020	TARKMANTCHATS / ԹԱՐԿԱՄԱՆՉԱՑ Fête de la découverte de l'écriture arménienne et de la traduction de la Bible.
28/11/2020	SOURP THADEOS — BARTOUGHIMEOS / ԹԱԴԵՆՍ-ԲԱՐՊՈՒԴԻՍԵՆՍ Fête de nos premiers Illuminateurs Apôtres Thaddée et Barthélémy



Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ՉՐՈՅՑ

Աստուածաշնչական Սերտողութիւններ
Հետաքրքրական նիւթեր

Հոգեւոր Հովիւ
Տ. Դաւիթ Քիւյ. Սարգսրեանի հետ

Հինգշաբթի, 6 Փետրուար 2020
երեկոյեան ժամը 7:00-ին, Եկեղեցւոյ մէջ:

Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն

ÉTUDES BIBLIQUES
ET
CAUSERIES SPIRITUELLES

Nous avisons à nos fidèles
nous recommencerons notre études
Bibliques et Causeries Spirituelles
Avec la participation Père David Margaryan
Curé Paroissial
Jeudi, 6 février 2020 à 19h00 dans l'église.

Une collation de café et de thé est servie

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար

ՏԵԱՌՆԴԱՌԱՉ

Տօն Քրիստոսի քառասնօրեայ Տաճար գալստեան

ՆԱԽԱՏՕՆԱԿ

Հանդիսաւոր ժամերգութիւն եւ
Նախատօնակ

Նորապսակներու
եւ Նոր Նշանուածներու
Օրհնութիւն

Հինգշաբթի՝ 13 Փետրուար 2020
Երեկոյեան ժամը 7-ին:



Յաւարտ արարողութեան
հիւրասիրութիւն
«Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ:

Սիրով կը հրաւիրենք
հաւատացեալ մեր ժողովուրդը

եւ մասնաւորաբար
Նորապսակներն ու Նոր
Նշանուածները

Հաղորդակից դառնալու օրուայ խորհուրդին եւ օրհնութիւն ստանալու:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008
stgregorychurch@gmail.com



**Ս. Գրիգոր Լուսաւորիչ
Առաջնորդանիստ Մայր Տաճար
ՏՕՆ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՉՕՐՎՎԱՐԱՅՆ**

Սկառւտներու Օրհնութեան Օր



**Հանդիսաւոր Ս. Պատարագ
Եւ Տօնակատարութիւն**

Նախագահութեամբ՝ Թեմիս Բարեջան Առաջնորդ
Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեանի

Պատարագիչ՝ Հոգեւոր Հովիւ
Արժ. Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան

Հինգշաբթի, 20 Փետրուար 2020, երեկոյեան ժամը 6:30-ին:

Յաւարտ Ս. Պատարագի գեղարուեստական յայտագիր եւ
հիւրասիրութիւն «Մարի Մանուկեան» սրահին մէջ:

Սիրով կը հրաւիրենք հաւատացեալ ժողովուրդը միասնաբար
նոգեկոչելու Սրբոց Վարդանանց Նահատակներու յիշատակն ու աւանդոյթը:

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2
Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008

stgregorychurch@gmail.com



**ՀՄԿՈՒՄԻ ՀՈԳԵՊԱՐԱՐ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ**

Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7:00-ին

Փետրուար 26 – Ապրիլ 9, 2020

Փետրուար 26 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան

*Պահոց Ընթրիք – Փառանձեմ Գեորգեան, Լիլիթ Մարտիրոսեան,
Շողիկ Գրիգորեան եւ Թամար Սաղըրեան:*

Մարտ 4 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Գեորգ Քհնյ. Աբեան

Պահոց Ընթրիք – Թէքեան Սշակուկային Միութիւն

Մարտ 11 – Քարոզիչ՝

Արժ. Տ. Կոմիտաս Քհնյ. Միրզախանեան

Պահոց Ընթրիք – Տիկ. Թալին Թանաշեան

Մարտ 18 – Քարոզիչ՝

Գերշ. Տ. Աբգար Եպս. Յովակիմեան

Առաջնորդ Գանատահայոց Թեմի

Պահոց Ընթրիք –

Տ. եւ Տիկ. Ասպետ եւ Միրնա Պաճաքեան

Մարտ 25 – Քարոզիչ՝

Գերշ. Հ. Գեորգ Ծ. Վրդ. Չապարեան

Պահոց Ընթրիք –

Տիկ. Սոնիա Գալայճեան եւ Սոսի Նազաշեան

Ապրիլ 1– Քարոզիչ՝

Պատուելի Յովհաննէս Սվաճեան

Պահոց Ընթրիք –

Տիկ. Թագուհի Օտապաշեան եւ Ընտանիք

Ապրիլ 9– Աւագ Հինգշաբթի


Քարոզիչ՝ Արժ. Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան

Պահոց Ընթրիք – Տիկնանց Յանձնախումբ

«Մարի Սանուկեան» սրահին մէջ

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008

✉ stgregorychurch@gmail.com  Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

 www.saintgregory.ca



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN
ԿԻՐԱԿԱՍՏԻՑ ԺԱՍՆԵՐԳՈՒԹԻՒՆ



Միրով կը յայտնենք, թէ
Շաբաթ, 29 Փետրուար 2020-ի
երեկոյեան ժամը՝ 5-ին, երեկոյեան
(Կիրակամտից) ժամերգութիւն պիտի
կատարուի Մոնթրէալի Սբ. Գրիգոր
Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ
մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացեալները
ներկայ գտնուելու հոգեպարար այս
արարողութեան:

*Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան*



Յարգելի՛ ծնողներ, կը տեղեկացնենք, որ սոյն տարուայ սկսած Սեպտեմբեր ամիսէն նոր որակով եւ ընդլայնուած ծրագիրով կը վերամեկնարկէ Մոնթրէալի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճարի կիրակնօրեայ վարժարանը իր 2019-2020 ուսումնական տարին:

Կիրակնօրեայ վարժարանը նոր ուսումնական տարեշրջանին կ'առաջարկէ հետեւեալ դասընթացքները.

1. Հայոց պատմութիւն եւ հոգեւոր գիտելիքներ _____
2. Մանկապատանեկան երգչախումբ
3. Շախմատ (ճատրակ)
4. Նկարչութիւն
5. Հայոց լեզու
6. Խօսքի մշակոյթ (թատրոն, ասմունք):
7. Դաշնակի Դասընթացք – (Մանրամասնութեան համար հեռաձայնել _____ Վարժարանի պատասխանատուներուն՝ Հայկին եւ Ալինային):

Կը խնդրենք ընդունիլ առ ի գիտութիւն, որ կատարուած են որոշակի փոփոխութիւններ Կիրակնօրեայ Վարժարանի դասընթացքներու կազմակերպման ընթացքին մէջ.

- դասընթացքները պիտի սկսին ժամը 10:30-ին եւ կ'աւարտին՝ ժամը 14:00-ին, որոնց ընթացքին տեղի կ'ունենայ հիւրասիրութիւն:
- դասընթացքներու համար կ'ակնկալուի ձեր խորհրդանշական մասնակցութիւնը՝ 1 փոքրիկի պարագային ամիսը \$15, երկուքի պարագային՝ \$25, իսկ երեքի պարագային՝ \$33:

Միաժամանակ կը տեղեկացնենք, որ ներկայիս կը քննարկուի նաև փոխադրամիջոցի ապահովման հարցը (լրացուցիչ վճարման դիմաց):

Ձեր բոլոր առաջարկները կրնաք ներկայացնել Կիրակնօրեայ Վարժարանի պատասխանատուներուն անձամբ կամ հետեւեալ Ե-հասցէներով (e-mail)՝

haykpetrosyan80@gmail.com կամ alinabezhanyan1@yahoo.com:

Փոքրերու արձանագրութեան համար հեռաձայնել՝

Ալինա (438) 889-8167 Հայկ (514) 619-7098



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Մեր սիրելի հաճատացեալներուն կը տեղեկացնենք՝
Թէ Ձեր ինքնաշարժերը ապահով կերպով կրնաք կանգնեցնել Bernard
փողոցին վրայ գտնուող

Centre Education des Adultes Outremont դպրոցին
կայանատեղիին (parking)-ին մէջ:

Հասցեն կարելի է տեսնել ստորեւ կցուած յայտարարութեան մէջ:

Նաեւ՝ կարելի է օգտագործել Stuart պողոտային կից գտնուող
Հիւսիսային Lajoie փողոցին երկու կողմերը:

Եկեղեցւոյ շրջակայքը գտնուող բոլոր փողոցներուն կարելի է
կանգնեցնել ձեր ինքնաշարժները, որոնք ի զօրու են մինչեւ

31 Յունուար 2020:

Շնորհակալութիւն
Ծիական Խորհուրդ

PARKING

We would like to inform you that you can safely park your cars
In the parking lot of the
Center Education des Adultes Outremont School
on Bernard street.

The address can be found in the attached map below.

**You can also park on both sides of North Lajoie Street
adjacent to Stuart, the parkings are valid until **January 31, 2020.****

Thank you
Parish Council



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

ԻՆՔՆԱՇԱՐԺԵՐՈՒ ԿԱՅԱՆԱՏԵՂԻ

Միրելի հաւատացեալներ,
հաճոյրով կը տեղեկացնենք, թէ յետայսու, ամէն Կիրակի,
ձեր ինքնաշարժերը կրնաք կանգնեցնել
Bernard փողոցին վրայ գտնուող
«Centre d'Éducation des Adultes Outremont» դպրոցի
կայանատեղիին (parking) մէջ,
սկսեալ առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.է. ժամը 3:



PARKING

Dear parishioners, we would like to inform you that every Sunday you will be able to park your cars at the parking of the school Centre d'Éducation des Adultes Outremont on Bernard Street, from 10:00 am – 3:00 pm

- From our Church turn right on Bernard stret, go 1 block.
- Turn left on Dollard Blvd. all the way to the 'Centre d'Éducation des Adultes Outremont. The parking space is on your right

Adress : 500 Boulevard Dollard, Outremont, QC H2V 3G2